ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"05" դեկտեմբերի 2025 թվական N 10-Ն

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 20-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետի և 10-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի փոստային վճարման պետական նշանների թեմաները սահմանելու և փոստային վճարման պետական նշանների անվանագները, տպաքանակն ու գործողության մեջ դնելու ժամկետները հաստատելու մասին» N 20-Ն հրամանի հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի 4.11-րդ կետի՝ «Գործողության մեջ դնելու ժամկետը» սյունակի «III եռամսյակ» բառերը փոխարինել «IV եռամսյակ» բառերով»:

2) Հավելվածի 6-րդ կետի «Փոստային վճարման պետական նշանների անվանումը» սյունակի «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» բառերով:

3) Հավելվածի 13.1-ին կետի «Անվանագինը (դրամ)» սյունակի «400» և «500» թվերը փոխարինել «500» և «560» թվերով:

2. Հաստատել փոստային վճարման պետական նշանների նմուշները՝

1) Միջազգային. Լուսնային Նոր Տարի թեմային նվիրված «ԼՈՒՍՆԱՅԻՆ ՆՈՐ ՏԱՐԻ. LUNAR NEW YEAR» 1 նամականիշի, համաձայն N 1 հավելվածի.

2) Մեծանուն հայեր. Հակոբ Կարապենցի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «100th. ամյակ. anniversary. Հայ արձակագիր. Armenian novelist. ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ. HAKOB KARAPENTS. 1925-1994» 1 նամականիշով բացիկի, համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի տեսարժան վայրեր. Հայաստանի տեսարժան վայրեր թեմային նվիրված «Գեղարոտի ջրվեժ, Արագածոտն. Gegharot Waterfall, Aragatsotn», «Սմբատաբերդ ամրոց, X-XIV դդ., Վայոց ձոր. Smbataberd Fortress, X-XIV cc., Vayots Dzor», «Աժդահակ լեռ. Mount Azhdahak» և «Խնձորեսկի կամուրջ, Սյունիք. Khndzoresk Bridge, Syunik» 4 նամականիշի, համաձայն N 3, N 4, N 5 և N 6 հավելվածների:

3. Գործողության մեջ դնել՝

1) Միջազգային. Լուսնային Նոր Տարի թեմային նվիրված «ԼՈՒՍՆԱՅԻՆ ՆՈՐ ՏԱՐԻ. LUNAR NEW YEAR» 1 նամականիշը, անվանագինը՝ 500 դրամ, տպաքանակը՝ 15 000 հատ.

2) Մեծանուն հայեր. Հակոբ Կարապենցի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «100th. ամյակ. anniversary. Հայ արձակագիր. Armenian novelist. ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ. HAKOB KARAPENTS. 1925-1994» 1 նամականիշով բացիկը, անվանագինը՝ 400 դրամ, տպաքանակը՝ 1 000 հատ.

3) Հայաստանի տեսարժան վայրեր. Հայաստանի տեսարժան վայրեր թեմային նվիրված «Գեղարոտի ջրվեժ, Արագածոտն. Gegharot Waterfall, Aragatsotn», «Սմբատաբերդ ամրոց, X-XIV դդ., Վայոց ձոր. Smbataberd Fortress, X-XIV cc., Vayots Dzor», «Աժդահակ լեռ. Mount Azhdahak» և «Խնձորեսկի կամուրջ, Սյունիք. Khndzoresk Bridge, Syunik» 4 նամականիշը, անվանագինը՝ 320, 380, 500 և 560 դրամ, տպաքանակը յուրաքանչյուրից՝ 10 000 հատ:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 1
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2025 թվականի դեկտեմբերի «05»-ի թիվ 10-Ն հրամանի

Հավելված 2
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2025թվականի դեկտեմբերի «05»-ի թիվ 10-Ն հրամանի



Հավելված 3
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2025 թվականի դեկտեմբերի «05» -ի թիվ 10-Ն հրամանի

Հավելված 4
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2025թվականի դեկտեմբերի «05»-ի թիվ 10-Ն հրամանի

Հավելված 5
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2025թվականի դեկտեմբերի «05»-ի թիվ 10-Ն հրամանի

Հավելված 6
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2025 թվականի դեկտեմբերի «05» թիվ 10 - Ն հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

МИНИСТЕРСТВО ВЫСОКОТЕХНОЛОГИЧЕСКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

MINISTRY OF HIGH-TECH INDUSTRY OF THE REPUBLIC OF ARMENIA

02565F18